

# ՓՈՒՆԱԴԱՐՁ-ՀԱՄԱՏԵՂ (İŞTEŞ ÇATI) ՍԵՌԻ ԲԱՅԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴՐԱՏՎՈՐՈՒՄՆԵՐԸ\*

Լուսինե Սահակյան, Շուշանիկ Զաքարյան  
*Երևանի պետական համալսարան*

Հոդվածի շրջանակում, հենվելով հայ, թուրք և ռուս լեզվաբանների ուսումնասիրությունների վրա, թուրքերենի փոխադարձ սեռը քննել ենք ձևաբանական մակարդակում՝ վեր հանելով իմաստային դրսևորումները և հայերեն համարժեք ձևերը: Ներկայացվում են նաև թուրքերենի փոխադարձ-համատեղ սեռը բնութագրող սահմանումներ ու տեսակետներ:

**Բանալի բառեր.** բայի սեռ, ձևաբանություն, փոխադարձ-համատեղ սեռ, ածանց, թուրքերեն:

## Ներածություն

Ժամանակակից թուրքերենը, ժառանգելով հին թուրքերենի և օսմանյան շրջանում գործածվող բայասեռի բնորոշ ածանցները, ինչպես նաև յուրացնելով ժամանակի ընթացքում ստեղծված նորաբանությունները, այսօր ունի բայասեռի յուրահատուկ ձևեր, որոնք խոսքի շղթայում հանդես են գալիս ձևաիմաստային և շարահյուսական զանազան դրսևորումներով: Թուրքերենի և առհասարակ թյուրքական լեզուների բայասեռի կարգում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում փոխադարձ-համատեղ սեռը: Չնայած այս սեռի վերաբերյալ առկա են բազմաթիվ թյուրքագիտական ուսումնասիրություններ, այնուամենայնիվ առանձնացված չեն տարանջատման միասնական չափորոշիչները, իմաստային առանձնահատկությունները, բավարար լուսաբանված չէ բառաքերականական հայեցակերպը: Թյուրքագետ-լեզվաբանները փոխադարձ-համատեղ սեռը դիտարկել են տարբեր տեսանկյուններից՝ բառակազմական, ձևաբանական, բառափոխական:

## Փոխադարձ-համատեղ սեռի բնութագրումն ու սահմանումները

Թուրքերենի փոխադարձ-համատեղ սեռի բայն արտահայտում է երկու կամ ավելի սուբյեկտների միասին կամ միմյանց նկատմամբ կատարվող գործողություն: Այլ կերպ ասած՝ անցողական բայերից կազմվող փոխադարձ սեռի բայերը (Баскаков 1973:212) ցույց են տալիս մեկից ավելի ենթակաների գործողություն, որը համատեղ կամ փոխադարձաբար տարածվում է կատարող սուբյեկտներից յուրաքանչյուրի վրա (Սաֆարյան, Սողոմոնյան, Լոքմազյոզյան 2007:12):

Թյուրքագետ լեզվաբանները տարբերակում են փոխադարձության և համատեղության նշանակությունը՝ գործածելով *փոխադարձ-համատեղ սեռ* եզրույթը (Սաֆարյան, Սողոմոնյան, Լոքմազյոզյան 2007): Թուրք լեզվաբանները նույնպես

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 27.01.2017:

այս սեռը միավորում են մեկ եզրույթի ներքո՝ այն անվանելով *փոխադարձ-համատեղ (İştes) սեռ* (Korkmaz 2003:538-567): Միայն Հ. Դիլաչարն է, որ փոխադարձությունն (Karşılıklı) ու համատեղությունը (İşteslik) դիտարկում է որպես առանձին սեռեր (Dilaçar 1989:106): Սակայն թուրքերենի այս սեռի գործառույթները համակողմանի բնութագրելու առումով ճշգրիտ է *փոխադարձ-համատեղ* եզրույթի կիրառումը:

Փոխադարձ-համատեղ սեռի բայերը կազմվում են բայահիմքին միացող *-ş* և (*iş -iş -uş - iş*) ածանցների միջոցով: Եթե բայահիմքն ավարտվում է ձայնավոր հնչյունով, ապա նրան կցվում է *-ş*, իսկ բաղաձայնով վերջացող բայահիմքին միանում են *-ş* և *-iş* (*iş -iş -uş -iş*) վերջածանցները (Иванов 1977:18)՝ *tanımak / ճանաչել, ծանոթանալ - tanışmak / իրար ճանաչել, ծանոթանալ, beklemek / սպասել - beklemek / իրար սպասել*:

Ն. Բասկակովը, համեմատական քննություն կատարելով, վեր է հանել թյուրքական լեզվաընտանիքին պատկանող նողայերենի փոխադարձ-համատեղ սեռի ձևաբանական ցուցանիշը. *-c* (թուրք. *-ş*) ածանցը միանում է բայահիմքին: Բառավերջի բաղաձայնով բայական հիմքերին միանում են *-ыс/ис* ածանցները, օրինակ *коёр-ис / տեսնվել, հանդիպել, яз-ис / գրել միմյանց, бол-ыс / օգնել, օգնություն ցույց տալ միմյանց, юр-ис / շփվել, միմյանց մոտ գնալ, тамы-ис / ծանոթանալ, обд-ис / համբուրվել, яря-с / հաշտվել* և այլն (Баскаков 1973:213): Թուրքերենում սովորաբար փոխադարձ-համատեղ սեռի ածանցները դրվում են կրավորական, անդրադարձ, հարկադրական սեռերի ածանցներից հետո (Щербак 1987:114-115):

Ըստ Ի. Գիգանովի բնութագրման՝ այս սեռը թաթարերենում ընկալվում է որպես երկու կամ ավելի մարդկանց համատեղ գործողություն (Гиганов 1956:65): Հետագա ուսումնասիրություններում վեր են հանվում թյուրքական լեզուներում այս սեռի տարբեր իմաստները՝ համատեղ գործողություն, փոխադարձ գործողություն, կրկնություն, սկզբնական ձևից բոլորովին տարբեր իմաստ արտահայտող նոր գործողություն (Тымашев 1978:54-55): Վ. Բանգն այս ածանցի նախատիպ է համարում *-şu հետևել, ուղեկցել* բայերը, որոնք չկան ժամանակակից թյուրքական լեզուներում և արձանագրված չեն գրավոր աղբյուրներում:

Բյոթինգը, մանրամասն քննելով յակուտերենի փոխադարձ-համատեղ սեռը, համատեղ բայերն անվանում է *Coperativa*, իսկ փոխադարձը՝ *Reciproka*՝ առանձնացնելով դրանց ձևերը և տալով հիմնական նշանակություններն ու և առանձնահատկությունները: Ըստ նրա սահմանման՝ համատեղ բայերն արտահայտում են մի քանի անձանց կողմից կատարվող գործողություն, իսկ փոխադարձ բայերը մատնանշում են մի քանի մարդկանց կողմից իրենց իսկ ուղղված գործողություն (Бемлиуфк 1989:451):

Որոշ թյուրքագետներ փորձել են այս սեռի ածանցը համադրել կրավորական սեռի *-А-* ածանցի հետ՝ հիմք ընդունելով *-ш/а-* հնչյունների անհամապատասխանությունը: Մ. Զակիևը, օրինակ, նշում է, որ փոխադարձ-համատեղ սեռի բայերը կազմվում են *-и* դերբայական ածանցով: Այս դեպքում երկու կամ ավելի սյուբեկտներ միավորվում են մեկ կատեգորիայի շուրջ, այսինքն՝ բայը թույլ է տալիս հասկանալ, որ գործող անձիք մի քանիսն են: Փոխադարձ-համատեղ սե-

ռի հիմնական իմաստը այս դեպքում չի փոխվում, պարզապես ունենում ենք մի քանի գործող անձ» (Закусев 1958:88):

Կա նաև մեկ այլ տեսակետ, ըստ որի փոխադարձ-համատեղ սեռի բայերը, որոնք կազմված են անցողական հիմքերից, թյուրքական լեզուներում չեն արտահայտում համատեղության իմաստ, այլ օգտագործվում են հոգնակիության իմաստով (Маманов 1958:97):

Հարցի վերաբերյալ գոյություն ունեցող բազմաթիվ տեսական դրույթների շարքում կարևոր է Է. Սևորոյանի հետևյալ կարծիքը. քերականական մակարդակում փոխադարձ-համատեղ սեռը քիչ է զարգացած և կարող է կիրառվել միայն այն բայերի դեպքում, որոնք ծառայում են ինչպես միակողմ, այնպես էլ երկկողմ գործողությունների բնութագրման համար, երբ առկա է փոխազդեցության իմաստը (Севортян 1957:30):

### **Փոխադարձ-համատեղ սեռի տեսակները և կազմության առանձնահատկությունները**

Ա. Կոնոնովը թուրքերենի փոխադարձ-համատեղ սեռի բայերը բաժանում է երկու տեսակի՝ *փոխադարձ-անդրադարձ*, *փոխադարձ-ոչ անդրադարձ*: *Փոխադարձ-անդրադարձ* բայերը ձևավորվում են անցողական հիմքերից և արտահայտում են սուբյեկտի ու օբյեկտի փոխգործունեություն, այսինքն՝ ցույց են տալիս այնպիսի գործողություն, որն իրականանում է երկու կամ մի քանի սուբյեկտների հետ համատեղ՝ գործողության անցումով, յուրաքանչյուր սուբյեկտ գործողություն կատարողն է և միաժամանակ նույն գործողության օբյեկտն է: Այսպիսի բայերի անցողականությունը պահպանվում է. օրինակ՝ *kucaklamak / գրկել - kucaklaşmak / գրկախառնվել, փաթաթվել, vurmak / խփել - vuruşmak / միմյանց խփել, selamlamak / բարևել, ողջունել - selamlaşmak / ողջունել մեկմեկու* և այլն: *Yeni konuklarımızla dün tanıştık. / Նոր հյուրերի հետ երեկ ծանոթացանք* նախադասության մեջ համադրված են *tanı-mak / ճանաչել* և *tan - ış - mak / իրար հետ ծանոթանալ* բայերը: (Конов 1956:192):

*Փոխադարձ-ոչ անդրադարձ* բայերը կազմվում են անանցողական հիմքերից և արտահայտում են երկու կամ մի քանի սուբյեկտների համատեղ, համաժամանակյա գործողություն, ինչպես նաև այնպիսի գործողություն, որը կատարվում է սուբյեկտի կողմից մի քանի անգամ. օրինակ՝ *ağlamak / լալ - ağlaşmak / միասին լաց լինել, oynamak / խաղալ - oynamak / միասին խաղալ, qվարձանալ, uçmak / թռչել - uçuşmak / իրար հետ թռչել, gülmek / ծիծաղել - gülmüşmek / միասին ծիծաղել, vurmak / ծեծել - vuruşmak / իրար ծեծել, kıpıltı / և այլն: Polisler olay yerine koşuştular. / Ոստիկանները միասին դեպքի վայր վազեցին, Çocuklar bekleşiyi görünce kaçıştılar. / Երեխաները պահակին տեսնելուն պես միասին փախան: Sվյալ դեպքում *kaçmak* նշանակում է *փախչել* և *kaçışmak*՝ *միասին փախչել*:*

Բայերի փոխադարձ-անդրադարձ իմաստը կարող է արտահայտվել նաև նկարագրական՝ վերլուծական եղանակով, այսինքն՝ հիմնական սեռի բայով և *birbiri=biribiri / մեկը մյուսին, իրար, միմյանց, մեկմեկու / մեկմեկի* դերանուններով, որոնց միանում են համապատասխան դիմային և հոլովական ածանցներ (Конов 1956:193): Օրինակ՝ *birbirinize benziyorsunuz = benzeşiyorsunuz. / դուք նման եք իրար, birbirimize baktık = bakiştık / մենք նայեցինք իրար, միմյանց, birbirlerini bulmuşlar = buluştular / նրանք գտան (հանդիպեցին) մեկմեկու, birbirlerine gülmüşler = gülmüşler / նրանք ծիծաղեցին, ժպտացին միմյանց:*

Փոխադարձ-համատեղ սեռի ածանցները, միանալով անանցողական բայերի հիմքերին, առաջին հերթին փոխում են օբյեկտային կապերը. ածանցման ժամանակ առաջացող հիմքը ձեռք է բերում *-ile (-la-le)* հետադրությամբ լրացման հետ համադրվելու կարողություն (Иванов 1977:18) :

Ինչպես արդեն նշել ենք, *փոխադարձ ոչ-անդրադարձ* նշանակության բայերը կազմվում են անանցողական բայահիմքերից և արտահայտում են երկու կամ ավելի սուբյեկտների համատեղ, միաժամանակյա գործողություն, որը քանիցս կատարվում է սուբյեկտի կողմից: Օրինակ՝ *ağla - ş - mak / միասին արտասվել, kaç - ır - mak / միասին փախչել* և այլն:

Ա. Շէրբակը տալիս է հետևյալ բնութագրումը. «Այս սեռի իմաստն իր գոյության ամբողջ ընթացքում համատեղությունն է, իսկ նրա առավել տարածված տարբերակը՝ փոխադարձության իմաստը: Սրա առանձնահատկությունն այն է, որ գործողությունն ընթանում է տարբեր սուբյեկտների միջև: Հետևաբար փոխադարձությունը մտնում է այն իմաստների մեջ, որոնք կազմում են միջանկյալության կարգի իմաստաբանական կառուցվածք, և հենց այդ առումով է ստեղծվում կեղծ տպավորություն, թե փոխադարձ-համատեղ սեռի հիմնական իմաստներից մեկը դառնում է միջանկյալությունը» (Шербак 1987:115):

Նշենք նաև, որ *-s* ածանցով կազմված որոշ բայեր կորցնում են փոխադարձ սեռի իմաստն ամբողջությամբ՝ *çalışmak / աշխատել, görüşmek / տեսակցել, pürünürkelti* (Սաֆարյան, Սողոմոնյան, Լոբնազյոզյան 2007:94):

Փոխադարձ-համատեղ բայի իմաստ կարող են ունենալ նաև տրական հոլովով լրացում ունեցող որոշ անանցողական բայեր: Տվյալ դեպքում իրականանում է երկու սուբյեկտների կողմից կատարվող գործողություն: Համանման ածանցներով անանցողական բայերն ունեն համատեղ գործողության իմաստ: Սկզբնական հիմքերի և լրացումների համադրությունը տվյալ դեպքում չի փոխվում, և սեռային ցուցիչը հատկանշում է սկզբնական հիմքով արտահայտված գործողության սուբյեկտի քերականական բնութագիրը, այսինքն՝ մեկից ավելի սուբյեկտների թիվը: Թուրքերենում խոսքային իրադրության մեջ երբեմն փոխադարձ-անդրադարձ նշանակությունն արտահայտվում է վերոհիշյալ դերանվան ու փոխադարձ բայի առկայությամբ: Օրինակ՝ *Çocuklar, birbirine bakiştuktan sonra... / Երեխաները իրար նայելուց հետո...* Փոխադարձ-համատեղ սեռի ածանցները, միանալով անցողական բայական հիմքերին, ամենից առաջ փոխում են ելակետային հիմքի օբյեկտային կապերը: Ածանցման միջոցով կազմված հիմքը ձեռք է բերում *ile* հետդիրով խնդրի հետ հանդես գալու գործառույթ: *Sizinle biraz görüşmek istiyorum. / Ձեզ հետ կարճ ժամանակով հանդիպել եմ ուզում:* Նշենք, որ թարգմանությունը բառացի է, հայերենի լեզվամտածողության համաձայն նախադասությունը կունենա *Ձեզ կարճ ժամանակով տեսնել եմ ուզում* ձևը:

Անցողական փոխադարձ-համատեղ սեռի բայերի սեռային փոխհարաբերությունները հաճախ խախտվում են բայերի բառային տրոհման հետևանքով՝ սկզբնական կամ ձևավորված փոխադարձ բայի նոր բառային նշանակության առաջացման արդյունքում: Սա նշանակում է, որ այդպիսի բայերում *-(i)s* ածանցը կորցրել է սեռային նշանակությունը (Korkmaz 2003:55): Ինչպես, օրինակ՝ *çekmek / քաշել - çekişmek / վիճել, tutmak / բռնել - tutuşmak / բոցավառվել* և այլն:

Որոշ դեպքերում *-(i)s* ածանցը բայի հիմքին տալիս է ընդհանուր անդրադարձ իմաստ, որը մատնանշում է հիմնական փոխադարձ հատկանիշի նշանա-

կության զարգացում և կարող է հանդես գալ որպես բայակազմական ածանց: Օրինակ՝ *girmek* / մտնել, *girişmek* / խառնվել, *gelmek* / գալ, *gelişmek* / զարգանալ, ծավալվել, *yatmak* / պառկել, *yatışmak* / հանգստանալ և այլն:

Երբեմն *-(i)ş* ածանցով բայն իմաստային առունով համարժեք է բայի հիմնական սեռին, այսինքն՝ հանդես է գալիս որպես նույնանիշ բառ, սակայն նման բայական զույգերը բառակազմորեն տարբերվում են. օրինակ՝ *yetmek* / բավարարել և *yetişmek* / հասնել, աճել, կամ *yaramak* / օգնել, օգտակար լինել և *yaraşmak* / սազել համապատասխանել բայերը, որոնք երբեմն օգտագործվում են միևնույն իմաստով:

Առանձին դեպքերում *-(i)ş* ածանցը բային սեռային նոր իմաստ չի հաղորդում, այլ միայն բարդացնում է բայահիմքի իմաստը լարվածության, կրկնության, անընդհատության, հաճախականության կամ աստիճանականության նրբերանգներով. Օրինակ՝ *titremek* / դողալ, *titreşmek* / դողացնել, *nuşetle* / դողալ և *kızmak* / տաքանալ, բարկանալ, *kızışmak* / բորբոքվել, *beklemek* / սպասել և *bekleşmek* / անհամբերությամբ սպասել և այլն: Սահմանափակ թվով բայերի դեպքում *-(i)ş* ածանցն անտարրալուծելի (անբաժանելի) հիմք է, այսինքն՝ չունի առանձին արտահայտված հիմնական սեռ: Այդպիսի բայերից են՝ *kavuşmak* / մոտենալ, միանալ, *sivişmak* / աննկատ գնալ, անհետանալ, չքանալ և այլն:

Ժամանակակից թուրքերենի բառային կազմը համալրում են զգալի քանակությամբ փոխադարձ-անդրադարձ իմաստ ունեցող բայեր, որոնք կազմված են զոյական կամ ածական անուններից՝ *-laş -leş* (*-la+ş, -le+ş*) ածանցների օգնությամբ: Սակայն այդ բայերը չեն կարող դիտվել որպես անցողական բայերից կազմված փոխադարձ սեռի հարաբերակից ձևեր, քանի որ դրանք իրենք իսկ նախասկզբնական կամ սկզբնա-ձևային բայեր են (Анларов 1954:391): Այսպես, օրինակ՝ *veda* / հրաժեշտ, *vedalaşmak* / հրաժեշտ տալ, *söz* / խոսք, *sözleşmek* / պայմանավորվել, համաձայնության գալ, *iyi* / լավ, *iyileşmek* / լավանալ, *fena* / վատ, *fenalaşmak* / վատանալ և այլն (Lewis 1953:106):

Եզակի դեպքերում փոխադարձ-համատեղ սեռի ածանցը ներկայացվում է *-aş* ձևով, օրինակ՝ *yanaşma* / մոտենալ (*yan - մոտ, կողք*), սակայն կարելի է նաև ենթադրել, որ ածանցն այս դեպքում կազմված է մեկ հնչյունից՝ *-ş*, իսկ տվյալ դեպքում հիմքն է ոչ թե *yan*-ը, այլ *yana*-ն, որն ունի հաճախականացման իմաստ (Конов 1956:197):

Զուգադրության համար նշենք, որ Ի. Մուչնիկը, քննելով ռուսերենի փոխադարձ սեռը, գրում է, որ այն կարող է արտահայտված լինել ոչ միայն անդրադարձ, այլև ներգործական սեռերով. օրինակ՝ *сражаться с кем, разговаривать с кем*. Ապա հետևում է հետևյալ բնորոշումը. «Փոխադարձ սեռի իսկական ձևն անդրադարձն է: Ներգործական կամ միջին բայը միայն այն ժամանակ է ստանում փոխադարձի նշանակություն, երբ իր բուն իմաստով ցույց է տալիս երկու կամ մի քանի առարկաների փոխադարձ գործողություն, օրինակ, *воевать, спорить*: Սակայն երբ ներգործական սեռի տեսքով բայն ինքնին չի մատնանշում փոխադարձ գործողություն, այդ դեպքում այդպիսի բայը փոխադարձ սեռի փոխադրելու համար ներգործական սեռի ձևին ավելացվում է *-ся* վերջավորությունը: Օրինակ՝ *бить кого* և *биться с кем, сходится* և *сходиться с кем, с чем*» (Мучник 1971:28):

Թուրքերենի փոխադարձ կամ փոխադարձ-համատեղ սեռի բայերն իրենց գործառույթով համապատասխանում են հայերենի չեզոք սեռի բայերին: Հ. Բար-

սեղյանը, բնութագրելով հայերենի փոխադարձ բայերը, փաստում է, որ սրանք «չտարբերակվելով չեզոք սեռի մնացած բայերից՝ իրենց արտահայտած գործողության բնույթով տարբերվում են նրանցից: Օրինակ՝ *նա լվացվում է նշանակում է՝ նա լվանում է իրեն: Նրանք համբուրվեցին* նշանակում է՝ *նրանք համբուրեցին միմյանց: Նրանք գրկախառնվեցին* նշանակում է՝ *նրանք գրկեցին իրար:* Բայց այս բայերը չեզոք սեռի բայեր են և ոչ կրավորական այն պատճառով, որ ներգործող խնդիր չեն կարող ունենալ և այս բայերի արտահայտած գործողության գործող առարկան ավելի շատ գիտակցվում է իբրև սուբյեկտ, քան օբյեկտ» (Բարսեղյան 1953:128): Հայերենում երկու կամ մի քանի առարկաների այնպիսի գործողությունը, որը կատարում է այդ առարկաներից յուրաքանչյուրը, բայց և միևնույն ժամանակ այդ առարկաներից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես մյուս առարկայի կատարած գործողության օբյեկտ, կոչվում է փոխադարձ գործողություն: Այդպիսի գործողություն նշող բայերը կոչվում են փոխադարձ բայեր: Գ. Ջահուկյանը, քննելով *-վ-* կրավորական բայածանցի առանձնահատկությունները, նշում է, որ այն արտահայտում է նաև անդրադարձություն և փոխադարձություն (Ջահուկյան 1974:258):

Հասկանալի է, որ բայի արտահայտած փոխադարձ իմաստը պարզ և որոշակի կարող է դրսևորվել միայն հոգնակիի ձևում: Եզակի թվում փոխադարձ իմաստ կարող է դրսևորվել միայն այն դեպքում, երբ այդ բայերը կապակցվում են սեռական հոլովի և *հետ* կապով կազմված խնդրի հետ: Փոխադարձ իմաստ արտահայտող բայերի թիվը հայերենում բավականին սակավ է (Ասատրյան 1977:188): Սակայն հայ լեզվաբաններն այս սեռը դիտարկում են որպես բայական ձևեր:

Ամփոփելով՝ նշենք, որ ժամանակակից թուրքերենի փոխադարձ-համատեղ սեռն արտահայտում է երկու կամ ավելի սուբյեկտների կողմից միասին կամ միմյանց նկատմամբ կատարվող գործողություն: Փոխադարձության և համատեղության նշանակությունը տարբերվում է ըստ բայի ելակետային ձևի: Այլ կերպ ասած՝ փոխադարձ բայերը ցույց են տալիս մեկից ավելի ենթակաների կատարած գործողություն:

Փոխադարձ-համատեղ սեռի բայերը կազմվում են բայահիմքին միացող *-ջ-* և (*-ւջ -ւջ -ւս -ւս*) ածանցների միջոցով: Այս սեռի բայերը բաժանվում են երկու խմբի՝ փոխադարձ-անդրադարձ և փոխադարձ-ոչ անդրադարձ: Փոխադարձ-անդրադարձ սեռի բայերը ձևավորվում են անցողական հիմքերից և արտահայտում են սուբյեկտի ու օբյեկտի փոխգործունեություն: Փոխադարձ-համատեղ սեռի իմաստը համատեղությունն է, իսկ առանձնահատկությունը՝ գործողության ընթացքը տարբեր սուբյեկտների միջև:

Փոխադարձ-ոչ անդրադարձ նշանակության բայերը կազմվում են անանցողական հիմքերից և արտահայտում են՝ ա) երկու կամ մի քանի սուբյեկտների համատեղ, համաժամանակյա գործողություն՝ առանց գործողության անցման, բ) գործողություն, որը կատարվում է մի սուբյեկտի կողմից մի քանի անգամ:

Թուրքերենի փոխադարձ-համատեղ սեռով արտահայտված բայերը հայերեն թարգմանելիս ճշգրիտ համարժեքները վեր հանելու համար հարկ է հաշվի առնել վերոնշյալ առանձնահատկությունները: Թուրքերենի անդրադարձ և փոխադարձ համատեղ սեռերը, ըստ էության, իրենց գործառնությունով համապատասխանում են հայերենի չեզոք սեռի բայերին:

## Եզրակացություն

Այսպիսով ժամանակակից թուրքերենի փոխադարձ-համատեղ սեռն արտահայտում է երկու կամ ավելի սուբյեկտների կողմից միասին կամ միմյանց նկատմամբ կատարվող գործողություն:

1. Փոխադարձության և համատեղության նշանակությունը տարբերվում է ըստ բայի ելակետային ձևի: Այս սեռի բայերը ցույց են տալիս մեկից ավելի ենթակաների կատարած գործողություն և կազմվում են բայահիմքին միացող համապատասխան ածանցների միջոցով:

2. Փոխադարձ-համատեղ սեռի բայերը բաժանվում են երկու խմբի՝ փոխադարձ-անդրադարձ և փոխադարձ-ոչ անդրադարձ:

3. Թուրքերենի անդրադարձ և փոխադարձ համատեղ սեռերը, ըստ էության, իրենց գործառնությամբ համապատասխանում են հայերենի չեզոք սեռի բայերին:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրյան, Մ. (1977) *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր*, Երևան: ԵՊՀ հրատ.:
2. Բարսեղյան, Հ. (1953) *Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն*. Երևան: ՀՍՍՌ պետ. հեռ. մանկ. ինստ.:
3. Ջահուկյան, Գ. (1974) *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ*. ԵՊՀ հրատ.:
4. Սաֆարյան, Ա.; Սողոմոնյան, Ա.; Լոքմազյոզյան, Տ. (2007) *Թուրքերենի դասագիրք*. Գիրք Ա, Երևան: Ոսկան Երևանցի հրատ.:
5. Аўляров, Ш. (1954) *Учебник турецкого языка*. М.: МИВ.
6. Баскаков, Н. (1973) *Грамматика Ногайского языка. II Фонетика и морфология*, ч. 1. Черкесск: Став. кн. изд.
7. Бётлингк, О. (1989) *О языке якутов*. Новосибирск: Наука.
8. Гиганов, И. (1956) *Грамматика татарского языка*. Петербург: Наука.
9. Закиев, М. (1958) *Выступление на совещание по проблеме простого предложения и категории залога. II Вопросы составления описательных грамматик языков народов СССР*. Уфа: Унив. тип.
10. Иванов, С. (1977) *Грамматические категории глагола*. II Курс турецкой грамматики, ч. 2. Ленинград: изд. ЛГУ.
11. Кононов, А. (1956) *Грамматика современного турецкого литературного языка*. Москва-Ленинград: изд. АН СССР.
12. Маманов, И. (1958) *Выступление на координации совещании по проблемам простого предложения и категории залога*. Уфа: Унив. тип.
13. Мучник, И. (1971) *Грамматические категории глагола и имени в современном русском литературном языке*. М.: Наука.
14. Тумашев, Д. (1978) *Морфология*. Казань: АН СССР.
15. Севортян, Э. (1957) *Аффиксальное глаголообразование в азербайджанском литературном языке*. М.: Наука.
16. Серебренников, Б. (1976) *К проблеме происхождения аффиксов страдательного залога (-l-, -ul-, -il-, n-, ul-, -in) в тюркских языках*. Ленинград: Наука.

17. Щербак, А. (1987) *Очерки по сравнительной морфологии тюркских языков (наречие служебные части речи, изобразительные слова)*. Ленинград: АН СССР.
18. Bang, W. (1916) *Studien zur vergleichenden Grammatik der Türksprachen*. Berlin.
19. Dilaçar, A. (1989) *Grammer: Tanımı, Adı, Kapsamı, Türleri, Yöntemi, Eğitimdeki Yeri ve Tarihçesi*. Ankara: TDAY Belleten.
20. Korkmaz, Z. (2003) *Türkiye Türkçesi Grameri, (Şekil Bilgisi)*. Ankara: TDK.
21. Lewis, G. (1953) *Teach Yourself Turkish*. London: OUP.

### **Morphological and Semantic Forms of the Verbs of the Reciprocal-Cooperative Voice**

Modern Turkish reciprocal-cooperative voice expresses an action carried out by two or more subjects together or to each other. The meaning of the reciprocity and cooperation differs according to the root form of the verb. The verbs of this voice show an action carried out by more than one subjects and are formed by adding the appropriate suffixes to the root of the verb. The verbs of the reciprocal-cooperative voice are divided into two groups: reciprocal-reflexive and reciprocal-non-reflexive. Turkish reflexive and reciprocal-cooperative voices, in fact, functionally coincide with the non-active (neutral) voice of the verbs in Armenian.

### **Морфологические особенности и семантические проявления взаимно-совместного глагола**

В современном турецком языке взаимно-совместный залог выражает действие, совершаемое субъектами совместно или совершаемое по отношению друг к другу. Значение взаимности и совместности отличается исходной формой глагола. Глаголы этого залога показывают действие, совершаемое несколькими подлежащими и образуются посредством присоединения к основе глагола соответствующих суффиксов. Глаголы взаимно-совместного залога делятся на две группы: взаимно-возвратное и взаимно-невозвратные. Возвратные и взаимно-невозвратные залоговые глаголы турецкого языка функционально соответствуют глаголам нейтрального залога армянского языка.